ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 հունվարի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

5
(3036)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻ ՈՐԴԻՆ ԱՋԱՏՎԵԼ Է ԲԱՆԱԿԻՑ

Իշխանությունները վանկարկում են, որ բոլորը պետք է անցնեն պարտադիր զինվորական ծառայություն. տարբեր ուռուցքներ ունեցողները, գիշերամիզությամբ տառապողները, վատ տեսողություն ունեցող երիտասարդները, սակայն փոխնախարարի որդին այդպես էլ օրենքի որեւէ կետով ծառայությանը պիտանի չդարձավ:

Ծանոթ-բարեկամով բանակից ազատվածների կապակցությամբ այս անգամ հիշեցնում ենք ՀՀ առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանի որդու մասին: «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ էին հասել, որ Լենա Նանուշյանը, օգտվելով իրեն ընձեռված հնարավորություններից, որդու առողջական վիճակի վերաբերյալ այնպիսի փաստաթղթեր է հավաքել, որոնցով կարողացել է նրան վերջնականապես ազատել զինծառայությունից՝ առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի լինելու հիմքով:

ՀՀ առողջապահության նախարարությունից այն ժամանակ մեզ որեւէ հստակ մեկնաբանություն չէր տրվել:

Բացի այս սկանդալից, կա եւս մեկը. Լենա Նանուշյանը ամեն բան անում է, որ դիրքերն ամրացնի, եւ Ավանեսյանի շուրջ պրկված օղակի գործելուն պես, երբ նախարար Անահիտ Ավանեսյանը լքի պաշտոնը, ինքը գրավի նախարարի աթոռը:

Ասել է թե՝ Անահիտ Ավանեսյանի տեղակալը գործում է իր դեմ եւ գաղտնի պլաններ է գծում առողջապահության ազգային ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Բազարչյանի հետ միասին:

«Ժողովուրդը» փորձեց Նանուշյանից մեկնաբանություններ ստանալ, բայց ապարդյուն:

Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը հին աշխատանքին է անցել. ակցիաներ, կոչեր թե՝ բոյկոտեք թանկացող տրանսպորտը: Ինչ խոսք, լավ է ինչում, իսկ ի՞նչ հետեւանքներ կարող են լինել, ո՞վ կվճարի քաղաքացիների տուգանքը: Հիշեցնենք, որ Մարությանը առաջարկում է փետրվարի 1-ից մտնել ավտոբուս, տալ 100 դրամ եւ երթեւեկել, բայց իշխանությունը, կարծես թե, մտադիր է տուգանք կիրառել քաղաքացիների նկատմամբ, որը կլինի 50.000 ՀՀ դրամ: Ու դժվար թե Հայկ Մարությանը, Գագիկ Բեգլարյանի ու Հովիկ Աբրահամյանի հարեւանությամբ գտնվող իր տունը գրավադրի, որպեսզի մարդկանց օգնի վճարել այդ տուգանքները: Արդյունքում՝ քաղաքացին իր տուգանքի հետ միայնակ կմնա: Իսկ ինչ վերաբերում է այսօրվա թանկացումները 2013 թվականի «100 դրամանոց» բողոքի հետ համեմատելուն՝ ապա նշենք, որ այն ժամանակ մահաբեր գազելներն էին ու վատ ավտոբուսները, հիմա գոնե ունենք նոր տրանսպորտ՝ նոր ավտոբուսներով, քիչ թե շատ նորմալ վարորդներով: Այսինքն՝ սակագնի փոփոխությունը որակի հետ է առնչվում: Թեեւ պայքարը դեռ նոր դրսեւորումներ է ստանում, բայց պարզ չէ, թե ինչ ծավալների կհասնի. միայն թե վերջում տուժողը կլինի ժողովուրդը, ով կամ պետք է հարմարվի նոր գների հետ, կամ ենթարկվի մեծ տուգանքների:

Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ընդդիմադիր գործիչների կողմից Փաշինյանի ֆեյքերի ֆաբրիկայի գլխավոր ֆեյք հռչակված Տարոն Չախոյանի նկատմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը վարույթ է հարուցել: Ըստ «Օրագիր news»-ի՝ «Էթիկայի հանձնաժողովը տեղյակ չէ Տարոն Չախոյանի վիրավորական գրառումից» վերտառությամբ հրապարակման՝ 2024 թվականի հոկտեմբերի 21-ին Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանը Facebook սոցիալական կայքի իր էջում կատարել է հետեւյալ բովանդակությամբ գրառում. «Ամեն հաչացող շան վրա պետք չէ քար նետել: Մեքենայի հետեւից վազող շունն էլ է հաչում, բայց չի նշանակում, թե կարող է նստել ղեկին ու քշել: Սա ի պատասխան այն հարցմանը, թե ինչու չեմ արձագանքում իմ հասցեին էժան ստերին: Մի քանի ծակ դաշնակի կաղկանձոցը ապացույց է, որ ամեն շնագայլ իր տեղում է»: Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ Տ. Չախոյանի վարքագիծը պարունակում է նշված կանոնի առերեւույթ խախտում, քանի որ սոցիալական մեդիայում վիրավորական արտահայտություններ պարունակող հրապարակման կատարումը առերեւույթ կերպով կարող է հանգեցնել հանրային իշխանության հեղինակազրկման կամ հեղինակության արատավորման: Ըստ այդմ՝ Հանձնաժողովը որոշել է նշված դեպքի առթիվ հարուցել վարույթ: Հիշեցնենք, որ խոսքը նույն Տարոն Չախոյանի մասին է, որի առնչությամբ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը դիմել է ուժային կառույցների ղեկավարներին՝ հայտարարելով, որ նա ստախոս է եւ սուտ մատնության համար պետք է պատասխանատվություն կրի: Կարճ ասած՝ ֆեյք տարածող պաշտոնյա:



Հերթական աբսուրդ գնումը՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից. քյաբաբ ու իքիբիր: Առաջին հայացքից ոչ այդքան մեծ գումարի չափով գնումը հետաքրքրաշարժ է այնքանով, որ կառույցը, որը մեծ հաշվով կապ չունի սննդի հետ, ըստ փաստաթղթերի՝ գնել է քյաբաբ եւ արաբաթուրքական ձեւակերպմամբ՝ իքիբիր: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ Ներքին գործերի նախարարությունը 554 հազար դրամի սնունդ է գնել: Նախարարությունը «Նարինե Ադամյան» ԱՁ-ի միջոցով ձեռք է բերել 180 հատ քյաբաբ եւ 200 հատ իքիբիր. 234 հազար դրամ՝ 180 հատ քյաբաբի համար, 320 հազար դրամ՝ 200 հատ իքիբիրի համար: Ստացվում է, որ մեկ քյաբաբի արժեքը կազմել է 1.300 դրամ, իսկ իքիբիրինը՝ 1.600 դրամ: Թե ինչ առիթով են գնումը կազմակերպել եւ ում համար են նման որակի հյուրասիրություն նախապատրաստել, պատրաստվել, հայտնի չէ. փաստաթղթերում ոչինչ չկա այդ մասին: «Ժողովուրդ» օրաթերթը ներքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Նարեկ Սարգսյանից փորձեց տեղեկանալ, թե ո՞ւմ եւ ինչի՞ համար է կազմակերպվել սա. վերջինս մեզ հետ զրույցում ասաց, որ Ամանորից հետո Տավուշի մարզում հրդեհ է բռնկվել, եւ սնունդը գնվել է տեղի ծառայողների համար: Այստեղից հարց է ծագում, թե քանի՞ աշխատակից է եղել այնտեղ՝ հրդեհը մարելու համար, որ նման մեծ քանակի սննդով են ապահովել: Իհարկե, լավ կլիներ՝ արաբաթուրքական բառից հրաժարվեին, իքիբիրը պետական հաստատություններում, հաստատվող փաստաթղթերում գոնե փոխարինվեր հայերեն նման կամ համարժեք բառով՝ մանր խորոված, խորոված՝ փոքր կտորներով եւ այլն...

ԶՐՈՒՅՑ

Ս. ՕՀԱՆՅԱՆԸ՝ ԲԱՔՎԻ ՇԻՆԾՈՒ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը Աժ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի հետ զրուցել է Ադրբեջանում Արցախի նախկին ղեկավարների շինծու դատական գործերի եւ Ռուբեն Վարդանյանի վերջին հայտարարության մասին:

Հիշեցնենք, որ Հունվարի 17-ին Ադրբեջանում տեղի է ունեցել Արցախի նախկին պաշտոնյաների դատավարությունը: Ըստ «Ռոյթերս» գործակալության հաղորդման՝ դատավարությունները տեղի են ունեցել փակ դռների հետեւում, եւ մուտքը թույլատրված էր միայն ադրբեջանական պետական լրատվամիջոցներին:

Ադրբեջանի իշխանությունները նախկին պաշտոնյաներին մեղադրում են ծանր հանցագործությունների մեջ, ներառյալ՝ ահաբեկչություն եւ պատերազմական հանցագործություններ:

-Պարոն Օհանյան ուրբաթ օրը Բաքվում կայացավ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության եւ մյուս գերիների հարցով ապօրինի, շինծու դատավարությունը: Ի՞նչ գնահատական կտաք այս գործընթացին, հատկապես, որ Ռուբեն Վարդանյանն էլ հայտարարությամբ հանդես եկավ եւ ասաց, որ իր անունից կեղծ ստորագրություններ են փաստաթղթերի տակ դրվել:

-Համարում եմ, որ սա մեր ժողովրդի ու պետության մեծագույն ցավն է, եւ այնտեղ դատապարտում են ո՛չ միայն նշված անձանց՝ ռազմաքաղաքական ղեկավարությանն ու գերիներին, այլ նաեւ մեզնից յուրաքանչյուրին ու Հայաստանին: Հասկանալի է, թե այս կեղծ գործընթացը նախաքննության ընթացքում որքան է հավելյալ կեղծ, պարտադրված տեղեկություններով լրացվել: Պարտադրված՝ որպեսզի ստորագրեն մեր հայրենակիցները: Սա դասվում է այն պարտադրանքների շարքին, որոնք Ադրբեջանի կողմից պարտադրվում են Հայաստանին:

Ուզում եմ նշել նաեւ, որ բարոյական չէ մարդկանց քննադատությունն ու ատելության խոսքը, վերոնշյալ անձանց նկատմամբ ատելություն սերմանելը, քանի որ նրանց փոխարեն յուրաքանչյուրը կարող էր ենթարկվել այդ բոլոր բռնաճնշումներին: Բայց ակնհայտ է, հատկապես Ռուբեն Վարդանյանի տված ցուցմունքներից հետո, թե ինչպիսի իրականություն է այնտեղ տիրում:

Եկեք ամենակարեւորից խոսենք. իսկ դատավորն ո՞վ է: Տեղին է ասվում, որ «գողն առաջինն է ասում, որ գողացան ինձանից»: Ադրբեջանը ինքը, լինելով ագրեսոր եւ հանդիսանալով Արցախի Հանրապետության նկատմամբ պատերազմական գործողությունների եւ Հայաստանի Հանրապետության նկատմամբ բոլոր սադրանքների հեղինակը, փորձում է օրինական կերպով ընտրված ռազմաքաղաքական կեղավարությանը դատարպարտել: Սա կեղծ օրակարգ է: Մեզ համար անընդունելի է Հայաստանի իշխանությունների ո՛չ ազգային, ազգադավ կեցվածքը, որ չեն փորձում դատապարտել, կամ առավել եւս միջազգային հարթակ տանել այս ողջ գործընթացը: Ադրբեջանի ղեկավարությունն ինքը պետք է առաջին հերթին դատապարտվի միջազգային հարթակներում՝ հայ ժողովրդի եւ Հայաստանի նկատմամբ իրականացված բոլոր պատերազմական գործողությունների եւ, իհարկե, բոլոր բռնազավթիչ գործողությունների, ցեղասպանության համար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱԽԱԶԸ ԼՔԵՑ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ

«Շուրջ 17 տարվա ծառայությունից հետո՝ այսօր աշխատանքից ազատման դիմում եմ ներկայացրել»:

Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է Պետրոս Պետրոսյանը:

«Յուրաքանչյուր առավոտ աշխատանքի (ծառայության) եմ ներկայացել Հայրենիքիս անմնացորդ ծառայելու անհագ ցանկությամբ, սակայն որոշել եմ զբաղվել փաստաբանությամբ եւ այսուհետեւ այդ կերպ ծառայել ժողովրդիս ու պետությանս:

Երախտագիտությունս եմ հայտնում բոլոր ղեկավարներիս, որոնք երբեւէ հավատացել եւ վստահել են ինձ:

Շնորհակալություն բոլոր ընկերներիս, որոնց ձեռք եմ բերել այս տարիների ընթացքում, եւ որոնց հետ անցել ենք բարդ, դժվար, տեղ-տեղ վտանգավոր, բայց միեւնույն ժամանակ պատվաբեր ճանապարհ:

Աստված պահապան մեր Հայրենիքին...»,- գրել է նա:

Հիշեցնենք, որ 2024 թվականին Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախկին նախագահ Արգիշտի Քյարամյանի հրամանով Պետրոս Պետրոսյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետ: Նա դատախազությունը լքեց Գլխավոր դատախազի հետ տարաձայնության արդյունքում եւ նոր պաշտոն ստացավ Կոմիտեում:

ԻՆՉ ՄԻՋԱԴԵՊ Է ԵՂԵԼ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԵՎ Հ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԻՋԵՎ

Օրեր առաջ ՔՊ փակ նիստից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նախաձեռնող խմբի թեժ նիստը ավարտվել է քաշքշուկով: Իսկ իշխանական հերթական կռվի գլխավոր դերերում ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանն ու Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն են եղել:

Պատճառը Տավուշում տիրող բնապահպանական խայտառակ վիճակն է եղել, ապօրինի ծառահատումները, ինչի մասին ՔՊ վերջին նիստերին խոսել է Հայկ Սարգսյանը:

Երեկ եւս ՔՊ-ական պատգամավորը ծառահատումների վերաբերյալ սուր ելույթ է ունեցել ու մեղադրել մարզպետ Հայկ Ղալումյանին, ինչն էլ ավարտվել է փոխադարձ վիրավորանքներով ու քաշքշուկով:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ականները իրար հարվածել են հենց Նիկոլ Փաշինյանի ներկայությամբ, վերջինս էլ թողել ու հեռացել է:

Վեճին միջամտել է Անահիտ Ավանեսյանը, փորձել է հանգստացնել Հայկ Սարգսյանին ու Ղալումյանին, բայց իրավիճակը գնալով թեժացել է:

«Ժողովուրդ» օրաթերթը թեմայի վերաբերյալ զրուցել է Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի եղբոր՝ Վահե Ղալումյանի հետ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՈՒՐ Է Տ. ԱՎԻՆՅԱՆԸ, ԻՆՉՈՒ ՆԻՍՏԸ ՉԻ ՎԱՐԵԼ

Հունվարի 20-ին Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական 19 րոպե տեւած խորհրդակցությունն անցավ առանց քաղաքապետ Տիգրան Ավինյանի: Նիստն անցկացնում էր քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի հարցին, թե ինչո՞ւ է Ավինյանի փոխարեն Փամբուխչյանը նիստն անցկացնում, Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը պատասխանեց, որ Ավինյանն արձակուրդում է:

Քաղաքապետ Տիգրան Ավինյանն աշխատանքը կսկսի հունվարի 27-ից:

ԲԱՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ

Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարները բանակցում են խաղաղության պայմանագրի շուրջ. այս մասին հայտնել է Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը:

Ըստ Բայրամովի՝ խաղաղության երկու հոդվածների վերաբերյալ լիարժեք համաձայնություն ձեռք չի բերվել:

«Բանակցություններ են ընթանում: Հայաստանի սահմանադրության մեջ եւ իրավական փաստաթղթերում դեռեւս հավակնություններ կան ադրբեջանական հողերի նկատմամբ: Դրանք պետք է լուծում գտնեն»,- ասել է Բայրամովը՝ նշելով, որ հաջորդ հանդիպման վայրի եւ ժամի վերաբերյալ դեռեւս համաձայնություն չկա:

ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԱԾ ՄՀԵՐ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ Ո՞ՒՄ ԿՏՐՎԻ ՄԱՆԴԱՏ

Հայաստանի խորհրդարանում ավտովթարի հետեւանքով մահացած Միհեր Սահակյանին կփոխարինի Արմինե Խերանյանը:

Այս մասին հաղորդագրություն է տարածել Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

«ԿԸՀ-ն հունվարի 14-ին ստացել է Ազգային Ժողովի պատգամավոր Միհեր Սամվելի Սահակյանի մահվան մասին տեղեկացնող գրությունը: Ազգային Ժողովի «Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված եւ լիազորություններ վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը տրվել է նույն ընտրական ցուցակի առաջին մասի հերթական հաջորդ թեկնածու Արմինե Սամվելի Խերանյանին»,- ասված է հաղորդագրության մեջ:

Հիշեցնենք, որ Միհեր Սահակյանը մահացել է ավտովթարի հետեւանքով: Նա պատգամավոր էր ընտրվել 2022թ. դեկտեմբերի 10-ին «Հայաստան» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով:

ԼԵՌՆԱԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՎԵՐԵԼԱԿԻ ՎԹԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԵԼ Է ԱՌՆՎԱԶՆ 30 ՄԱՐԴ

Իսպանիայի Ասթուն հանգստավայրում լեռնադահուկային վերելակի փլուզման հետեւանքով առնվազն 30 մարդ է տուժել:

Այս մասին հայտնում է իսպանական Expansign թերթը՝ նշելով, որ միջադեպը տեղի է ունեցել Արագոն ինքնավար համայնքում:

Հաղորդվում է, որ վերելակը կարող էր խափանվել մալուխի հետ կապված խնդիրների պատճառով, սակայն միջադեպի ստույգ պատճառները դեռեւս հայտնի չեն:

Նշվում է, որ մարզում գտնվող առողջապահական ծառայություններն արդեն ահազանգել են տասնյակ տուժածների մասին:

Այս պահին կայանում կան մի քանի փրկարարական ուղղաթիռներ եւ մեկ տասնյակ շտապօգնության մեքենաներ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐՈՒՄ Է ՇՆՈՐՀԵԼ 613 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

Վրաստանի նախագահ Միխեիլ Կավելաշվիլին կիրակի ներում է շնորհել ավելի քան 600 բանտարկյալների՝ իր սահմանադրական լիազորությունների շրջանակում, հայտնում է «Սպուտնիկ» գործակալության վրացական ծառայությունը:

«Ուղղափառ քրիստոնեական Աստվածահայտնության տոնի հետ կապված՝ օգտագործել եմ սահմանադրական լիազորությունները, ներում եմ շնորհել 613 բանտարկյալի: Նրանց հնարավորություն է տրվում վերադառնալ իրենց ընտանիքներ եւ դառնալ հասարակության լիարժեք անդամ»,- գրել է Կավելաշվիլին:

Նա, սակայն, չի նշել, թե որ կատեգորիայի բանտարկյալների վրա է տարածվել ներումը:

Վրաստանի ընդդիմությունը քննադատել է Կավելաշվիլիի կողմից Աստվածահայտնության տոնի կապակցությամբ 613 դատապարտյալների ներումը:

«Գրեթե անհնար է 20 օրում ուսումնասիրել 613 դատապարտյալների առանձին գործերը եւ դրանից բխող ռիսկերը: Անհնար է նման մասշտաբի ներում շնորհել՝ առանց վերլուծելու երկրում հանցավորության եւ կրկնահանցագործությունների մակարդակը: Վարչախումբը կրկին կխոսի մարդկայնության մասին եւ կփորձի այս համաներումը քննադատողներին անվանել անհավատ եւ անմարդկային»,- գրել է ընդդիմադիր «Գախարիան Վրաստանի համար» կուսակցության առաջնորդներից մեկը՝ Նատիա Մեզվրիշվիլին:

«ԲԱՔՎՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՎՈՒՄ ԵՆ ԷԹՆԻԿ ՀԱՅԵՐԸ». Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՐԱՏԱՊ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

ՀՀ ԱԺ պատգամավոր, մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից ապօրինաբար հեռացված Թագուհի Թովմասյանը գրում է.

«Հրատապ գրություններ եմ ուղարկել իմ միջազգային գործընկերներին եւ մի շարք միջազգային կազմակերպությունների:

Նրանց ուշադրությունն եմ հրավիրել սույն թվականի հոկտեմբերի 17-ին Բաքվում տեղի ունեցած հայ ռազմաքաղաքական ղեկավարների դատավարությանը եւ ողջ այդ իրավական գործընթացի վրա:

Բաքվում դատապարտվում, նվաստացվում եւ խոշտանգվում են էթնիկ հայերը՝ մեր հայրենակիցները, ովքեր պատերազմի օրերին մինչեւ վերջին պահը մնացել էին Արցախում:

Դատավարությունն ընթացել է Բաքվի զինվորական դատարանում եւ 15 հայերի՝ Արկադի Ղուկասյան, Արայիկ Հարությունյան, Բակո Սահակյան, Դավիթ Իշխանյան, Դավիթ Բաբայան, Լեւոն Մնացականյան, Դավիթ Մանուկյան, Գարիկ Մարտիրոսյան, Մելիքսեթ Փաշայան, Դավիթ Ալավերդյան, Գուրգեն Ստեփանյան, Լեւոն Բալայան, Մադաթ Բաբայան, Վասիլի Բեգլարյան, Էրիկ Ղազարյան, նրանց մեղադրանք է առաջադրվել 2,548 դրվագով: Սա խելագարություն չէ, այլ նույնիսկ ավելին:

Իմ միջազգային գործընկերներին ներկայացրել եմ իրավիճակը եւ ահազանգել.

✔ Դատավարությանն ընդառաջ քաղբանտարկյալ, Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանը հայտարարել էր, որ իր փաստաբանին եւ թարգմանչին ստիպել են ստորագրել փաստաթղթեր հետին թվով, այդ թվում՝ չկայացած հարցաքննությունների կեղծ արձանագրություններ: Իրեն հնարավորություն չեն տվել ծանոթանալու գործին իրեն հասկանալի լեզվով, խոշտանգել են, արգելել ջուր խմել, զուգարանի թղթից օգտվել եւ այլ անմարդկային գործողություններ: Եվ նա առաջին մարդը չէ, որ Ադրբեջանում բանտային պայմաններից դժգոհում է:

✔ Բաքվում պահվող Ռուբեն Վարդանյանի հայտարարությունը փաստաբանական պաշտպանությանը եւ հարցաքննությունների կեղծ արձանագրություններին վերաբերող խնդիրների մասին լուրջ խախտում է, որը հակասում է արդար դատավարության իրավունքի հիմնարար սկզբունքներին:

✔ Ուզում եմ ընդգծել, որ Ադրբեջանը, խախտելով Ժնեւի կոնվենցիան, պատերազմից հետո հրաժարվում է վերադարձնել հայ գերիներին: Արցախի նախկին ղեկավարության եւ այլ անձանց մեղադրանքները կրում են ակնհայտ քաղաքական բնույթ: «Ահաբեկչություն» եւ «ապօրինի զինված խմբավորում կազմավորել» մեղադրանքները ծառայում են միայն քաղաքական շահերին՝ խախտելով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը:

! Հաշվի առնելով վերոնշյալը՝ խնդրել եմ իմ միջազգային գործընկերներին.

• իրենց մանդատի շրջանակներում ջանքեր գործադրել՝ հասնելու այն բանին, որ միջազգային անկախ դիտորդներ ներգրավվեն այդ դատավարություններում,

• դրանք ընթանան դռնբաց եւ լուսաբանվեն,

• կոչ անել Ադրբեջանի իշխանություններին դադարեցնել հայ ռազմագերիների եւ քաղաքացիական անձանց նկատմամբ խոշտանգումները,

• կատարելով միջազգային պարտավորությունները՝ պահանջել անհապաղ վերադարձնել նրանց հայրենիք»:

Amnesty International-Ի ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԲԱՔՈՒՆ ՊԻՏԻ ԱՊԱՀՈՎԻ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Միջազգային իրավապաշտպան Amnesty International կազմակերպության Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տնօրեն Մարի Ստրութերսը, արձագանքելով Լեռնային Ղարաբաղի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի դատավարության մեկնարկին, հայտարարել է, որ Ադրբեջանը պետք է պաշտպանի եւ ապահովի Ռուբեն Վարդանյանի արդար դատաքննության իրավունքները:

Այս մասին նշված է կազմակերպության կայքում տարածված հաղորդագրության մեջ:

«Ադրբեջանի իշխանությունները պնդում են, որ Ռուբեն Վարդանյանին դատարանի առջեւ են կանգնեցրել՝ պատասխանատվության ենթարկելու այն հանցագործությունների համար, որոնցում նրան մեղադրում են: Բայց, նրան զրկելով արդար դատաքննության իրավունքներից՝ նրանք արդարադատության ճիշտ հակառակն են անում: Իշխանությունները պետք է պաշտպանեն եւ ապահովեն Ռուբեն Վարդանյանի արդար դատաքննության իրավունքները»,-նշել է Մարի Ստրութերսը:

Նա հավելել է, որ Ռուբեն Վարդանյանը լուրջ մեղադրանքներ է բարձրաձայնել մարդու իրավունքների խախտումների մասին, այդ թվում՝ կալանքի ժամանակվատ վերաբերմունքը, կեղծված գործի նյութերը ստորագրելու հարկադրանքը եւ պաշտպանությունը նախապատրաստելու հնարավորությունից զրկելը:

«Իշխանությունները պետք է անհապաղ, մանրակրկիտ, անկախ, անաչառ եւ արդյունավետ կերպով հետաքննեն այս ծանր մեղադրանքները եւ պատասխանատվության ենթարկեն նրանց, ովքեր համարվում են այս ամենի պատասխանատուներ»,-նշված է տարածված հայտարարության մեջ:

Նրա դիտարկմամբ՝ Ադրբեջանի իշխանությունները պետք է Ռուբեն Վարդանյանին տրամադրեն լիարժեք հասանելիություն իր փաստաբանների հետ շփման, ինչպես նաեւ բավականաչափ ժամանակ ու հնարավորություն՝ պաշտպանությունը նախապատրաստելու համար:

«Միջազգային հանրությունը պետք է ուշադրությամբ հետեւի այս աղմկահարույց գործին՝ Ռուբեն Վարդանյանի արդար դատաքննության իրավունքն ու արդարադատությունն ապահովելու համար»,-նշել է Amnesty International կազմակերպության Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տնօրեն Մարի Ստրութերսը:

Ադրբեջանն ապօրինի ձերբակալել եւ շինծու մեղադրանքներ է առաջադրել Լեռնային Ղարաբաղի նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանին, Բակո Սահակյանին, Արայիկ Հարությունյանին, Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի պաշտոնը զբաղեցրած Դավիթ Իշխանյանին, արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանին, Պաշտպանության նախկին նախարար Լեւոն Մնացականյանին, Պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանին, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանին:

Կեղծ մեղադրանքներ են առաջադրվել նաեւ Վասիլի Բեգլարյանին, Էրիկ Ղազարյանին, Դավիթ Ալահվերդյանին, Գուրգեն Ստեփանյանին, Լեւոն Բալայանին, Մադաթ Բաբայանին, Գարիկ Մարտիրոսյանին, Մելիքսեթ Փաշայանին:

Ռուբեն Վարդանյանի նկատմամբ շինծու քրեական գործն անջատվել է մյուսների գործից, դատաքննությունն անցկացվել է առանձին:

Թե՛ Ռուբեն Վարդանյանի, թե՛ մյուս շինծու մեղադրյալների գործով դատական նիստն անցկացվել է հունվարի 17-ին: Վարդանյանի նկատմամբ դատական հաջորդ նիստը կկայանա հունվարի 27-ին, իսկ մյուս մեղադրյալների նկատմամբ դատական նիստը տեղի կունենա հունվարի 21-ին:

ԿԱԼԱՆՔ, ԹԵ՞ ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉ ՊԱՏԻԺ ԿԿԻՐԱՌԵՆ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

«Ժողովուրդ» օրաթերթը փաստաբան Լիոդարիս Սիմոնյանից տեղեկացավ, որ Սյունիքի մարզի դատարանի դատավոր Գ. Աբելյանի արդարացի վերդիկտով Ջալալ Հարությունյանը մեղավոր ճանաչվեց ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասով:

Իսկ ինչ է ասում ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոսվածի 3-րդ մասը:

Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետեւանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Դատավոր Աբելյանը ճանաչել է Ջալալ Հարությունյանին մեղավոր, սակայն դեռ ազատազրկման չի դատապարտել: Դատավոր Աբելյանը դեռ պետք է եւս մեկ լսում իրականացնի եւ լսի դատավարության կողմերին ազատազրկման չափի վերաբերյալ, որից հետո կգնա՝ որոշում կայացնելու: 8 տարվա ազատազրկո՞ւմ, թե՞ այլ մեղմ պատիժ. դժվար է ասել, սակայն լուրեր կան, որ չի բացառվում՝ դատավորը այնպիսի վճիռ կայացնի, որից հետո ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանին կորոշեն կալանավորել: Սպասենք զարգացումներին:

Հիշեցնենք, որ ըստ մեղադրական եզրակացության համառոտ բովանդակության՝ Ջալալ Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով պաշտպանության բանակի հրամանատարի պաշտոնը, կոչումով՝ գեներալ-լեյտենանտ, հանդիսանալով պաշտոնատար անձ՝ հանրային ծառայող, կոչման եւ պաշտոնի բերումով հանդիսանալով հրամանատար՝ ծառայողական դիրքով եւ զինվորական կոչումով տվյալ իրավահարաբերության շրջանակում ունենալով իր լիազորություններից բխող հրամաններ եւ կարգադրություններ տալու ու դրանց կատարումն ապահովելու իրավասություն, հայտարարված ռազմական դրության ժամանակ՝2020թ. հոկտեմբերի 12-ին, ծառայության նկատմամբ դրսեւորել է անփույթ վերաբերմունք՝ իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ եւ անփույթ վերաբերմունքի հետեւանքով դրանք կատարել է ոչ պատշաճ, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական վարույթով առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղի տնօրենի եւ պաշտոնատար այլ անձանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 17 մլն 299 հզր 250 ՀՀ դրամի գույքային վնաս:

Մասնավորապես՝ Գ.Խ.-ն, պարտավոր լինելով ապահովել ՊՈԱԿ-ի մասնաճյուղի բնականոն գործունեությունը, մինչեւ 2021 թվականի սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում անտառօգտագործման նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացրել, որի հետեւանքով անտառատնտեսության տարածքում ապօրինի հատվել է 500 ծառ՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

2025 թվականի հունվարի 15-ին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղի տնօրենի, երկու անտառապետի եւ վեց անտառապահի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին, որոնք բավարարվել են:

2025 թվականի հունվարի 16-ին երկու անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական անփութությունը, որն անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետեւանք), յոթ անձի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական անփութությունը):

Մեկ անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, մեկ անձի նկատմամբ կիրառվել են այլընտրանքային խափանման միջոցներ՝ տնային կալանք, բացակայելու արգելք եւ գրավ, երկու անձի նկատմամբ՝ պաշտոնավարման կասեցում եւ բացակայելու արգելք, երկու անձի նկատմամբ՝բացակայելու արգելք եւ գրավ, երեք անձի նկատմամբ՝բացակայելու արգելք:

Նախաքննությունը շարունակվում է:

ՇԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂԻ 18 ԿՐԱԿՈՑՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել Արարատի մարզի Դալար բնակավայրի կրակոցներից. ինչն է եղել 18 կրակոցի պատճառը եւ հարեւանին սպանել փորձելու դրդապատճառը:

Արա Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2024 թվականի հուլիս ամսին, քննությամբ չպարզված օրը, Արարատի մարզի Դալար բնակավայրի բնակիչ Ալբերտ Աշոտի Մարտիրոսյանի կողմից իր հարեւանությամբ բնակվող Արա Վանուշի Կարապետյանին պատկանող շանը թունավորելու եղանակով կյանքի ընդհատում պատճառելու կասկածի հանգամանքով պայմանավորված, 2024 թվականի հուլիսի 16-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում Դալար բնակավայրի Հ. Մանուկյան փողոցի թիվ 94-րդ հասցեում գտնվող Ալբերտ Մարտիրոսյանին պատկանող տան դիմաց, իր մոտ գտնվող զենքի՝ 1968 թվականի գործարանային արտադրության «ԱԿՄ» տեսակի Ոհ8997 համարի 7,62մմ տրամաչափի ակոսավտող հրազենի գործադրմամբ, կատարել է խուլիգանական գործողություններ:

Մասնավորապես, Արա Կարապետյանը խուլիգանական դրդումներով, այն է՝ սեփական անձի կարծեցյալ առավելությունն ընդգծելու մոլուցքով տարված, հակադրվելով հանրային վայրերում վարքագծի դրսեւորման կապակցությամբ ձեւավորված բարոյական կանոններին, գիտակցելով իր կողմից զենքի գործադրման արդյունքում՝ բնակելի հատվածում, փողոցում գտնվող անձանց կյանքի եւ առողջության համար իրական վտանգ ստեղծելու հանգամանքը, իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով՝ նշված ինքնաձիգով առնվազն 18 անկանոն կրակոցներ է արձակել Ալբերտ Մարտիրոսյանի տան ուղղությամբ, որոնցից երեքը դիպչել են Ալբերտ Մարտիրոսյանի տան պատին, դարպասին եւ գազի հաշվիչի արկղին, որպիսի գործողությունների արդյունքում փողոցի բնակիչների մոտ առաջացել է վախի, տագնապի, անհանգստության մթնոլորտ եւ կոպիտ կերպով խախտվել է հասարակական կարգը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎԱՐՈՒՅԹ՝ ՎԱՀՐԱՄ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Դերասան եւ թատերագիր Վահրամ Սահակյանի նկատմամբ քրեական վարույթ է նախաձեռնվել:

Այս մասին տեղեկացրեց ՀՀ քննչական կոմիտեի նախագահի մամուլի քարտուղար Կիմա Ավդալյանը:

Նա նշեց, որ քրեական վարույթ է նախաձեռնվել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով (ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք, ինչպես նաեւ այդ նպատակով նյութերի կամ առարկաների տարածում):

ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ ԿՆՈՋ ՄԱՐՄԻՆԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՋՐԱՏԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 26-ին հաղորդվել էր 73-ամյա Գրետա Զաքարյանի՝գերեզմանատուն գնալու եւ անհայտ կորելու մասին. հայտնում են ՀՀ ոստիկանությունից:

Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ծառայողների կողմից ձեռնարկված որոնողական միջոցառումների արդյունքում հունվարի 17-ին կնոջ մարմինը հայտնաբերվել է Էջմիածին քաղաքի ջրատարներից մեկի մեջ:

Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԵՂԲԱՅՐԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ՄՆԱԼ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

ԱԺ նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբայրը կշարունակի մնալ կալանքի տակ, դատարանը եւս 2 ամսով երկարաձգել է նրա կալանքը:

«Ժողովուրդ» օրաթերթն ավելի վաղ հայտնել էր, որ իրավապահ մարմինները լծված են իշխանության յուրացման գործով կալանավորված, ԱԺ նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբորը՝ Սերոբ Գասպարյանին եւ մյուս մեղադրյալներին կալանքի տակ պահելու գործին: Այսօր պարզ կլինի՝դատարանը բավարարե՞լ է նախաքննական մարմնի հերթական միջնորդությունը, եւ Սերոբ Գասպարյանը կշարունակի՞ մնալ ԱԱԾ մեկուսարանում, թե՞ ազատ կարձակվի:

Քրեական գործով անցնող մյուս մեղադրյալների մասով եւս նախաքննական մարմինը դիմել է դատարան՝ կալանքը երկարաձգելու միջնորդությամբ:

Նշենք, որ Սերոբ Գասպարյանի կալանքը 2 անգամ երկարաձգվել է. վերջին անգամ 2024 թվականի դեկտեմբերի 17-ին դատարանը նրա կալանքը մեկ ամսով երկարաձգեց:

Հիշեցնենք, որ Գասպարյանը մեղադրվում է մի քանի արցախցի անձանց հետ նախնական համաձայնությամբ իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու համար: Քրեական հետապնդում էր հարուցվել 7 անձի նկատմամբ: Նրանցից 3-ը կալանավորվել են, իսկ 4-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում. նրանց որոնում են շուրջ 4 ամիս»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունվարի 17-ից 20-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 209 դեպք, որից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՇՈՒԿԱՅԱԿԱՆԻՑ ԷԺԱՆ ԳՆՈՎ ԵՐԿՈՒ ՀՈՂԱՄԱՍ Է ՕՏԱՐՎԵԼ

Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի 5-րդ փողոց թիվ 60 հասցեի 1096.0 քմ հասարակական կառուցապատման հողամասը պատկանում է Սուրեն Հայկի Աղաջանյանին: Վերջինս դիմել է Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին՝ նշված հողամասին կից, Թեղուտ գյուղի 5-րդ փողոց թիվ 58/3 հասցեի 232.8 քմ մակերեսով եւ 5-րդ փողոց, թիվ 58/4 հասցեի 324.5 քմ մակերեսով հողամասերն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով: Համայնքի ավագանին 2024թ. դեկտեմբերի 17-ի թիվ 832-Ա որոշմամբ համաձայնություն է տվել նշված՝ 232.8 քմ եւ 324.5 քմ հողամասերն ընդլայնման կարգով Սուրեն Աղաջանյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի առաջարկությանը: Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը դեկտեմբերի 24-ին որոշել է. «1) Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի 5-րդ փողոց, թիվ 58/3 հասցեի 232.8քմ եւ 5-րդ փողոց 58/4 հասցեի 324.5 քմ հողամասերի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման եւ հաշվառել համայնքի հողերի ֆոնդի տարեկան հաշվեկշռում: 2) Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի 5-րդ փողոց, թիվ 60 հասցեի 1096.0քմ հասարակական կառուցապատման հողամասին կից գտնվող, 5-րդ փողոց, թիվ 58/3 հասցեի 232.8 քմ մակերեսով եւ 5-րդ փողոց, թիվ 58/4 հասցեի 324. 5քմ մակերեսով հողամասերն ուղղակի վաճառքի ձեւով (ընդլայնման կարգով) օտարել քաղաքացի Սուրեն Հայկի Աղաջանյանին: Հողամասերի արժեքը կազմել է համապատասխանաբար 284 249 դրամ եւ 396 215 դրամ»:

Թեղուտ գյուղի հողերի շուկայական գինը բավական բարձր է: Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավարը շուկայականից բավականին էժան գներով երկու հողամաս է օտարել Սուրեն Աղաջանյանին, այդ հողամասերի գործառնական նշանակությունը փոփոխել է: Դիլիջան քաղաքի բնակիչ, 1955 թվականին ծնված Սուրեն Հայկի Աղաջանյանը Դիլիջան քաղաքի հյուսիսային ծայրին՝ միջպետական ճանապարհի եզրին գտնվող հայտնի «Գետափ» ռեստորանային համալիրի սեփականատերն է, Դիլիջանի ազգային պարկի նախկին տնօրենը:

ՄԻԱՅՆ ԵՐԿԹԵՎԱՆԻ ԽԱՉՔԱՐՆ Է ՄՆԱՑԵԼ

Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղի վարչական տարածքում՝ Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի կողքին կառուցված ռուսական զորանոցն ամբողջությամբ քանդված է: Ոսկեպարի բնակիչները հայտնեցին, որ զորանոցի մաս կազմող հավաքովի մոդուլները քանդված վիճակում են, սակայն դեռ տեղում են գտնվում: Ռուսական զորանոցից մնացել է միայն ճանապարհի եզրին կանգնեցված, հայ-ռուսական բարեկամությունը խորհրդանշող, ռուսական ու հայկական խաչերով տուֆակերտ կոթողը: Քանդվել է նաեւ Բերդ համայնքի Այգեպար գյուղի մոտ կառուցված ռուսական զորանոցը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՒՄ Է ՏՐՎԵԼ ԴԱՎԻԹ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՄԱՆԴԱՏԸ

ՔՊ–Ն ՆՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՈՒՆԻ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը նոր պատգամավոր ունի:

Շիրակի մարզպետ նշանակված Դավիթ Առուշանյանի մանդատը տրվել է Ջուլիետա Ազարյանին:

Վերջինս Ավան վարչական շրջանի փոխթաղապետի պաշտոնն է զբաղեցրել:

Նոր պատգամավորը, համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, երդվեց ԱԺ ամբիոնից:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. ««Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նոր պատգամավորը՝ Ջուլիետա Ազարյանը, ով կփոխարինի Դավիթ Առուշանյանին, նշանակվել է Ավան վարչական շրջանի ղեկավարի տեղակալ՝ առանց բարձրագույն կրթության:

30-ամյա Ջուլիետա Ազարյանը, քաղաքական կարիերա չունենալով, միանգամից դարձել է Ավան վարչական շրջանի ղեկավար: Նա 2016 թվականին ավարտել է ՀՀ Երեւանի Էստրադայի եւ ջազային արվեստի պետական քոլեջը:

Քոլեջն ավարտելուց հետո միայն 8 տարի անց, երբ 2 տարի է, ինչ զբաղեցնում է վարչական շրջանի ղեկավարի տեղակալի պաշտոնը, այս տարի՝2024 թվականին, ընդունվել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի մշակութաբանության ֆակուլտետ եւ այժմ սովորում է այնտեղ:

Ավան վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Ջուլիետա Ազարյանը 2013-2014 թվականին կամավոր է եղել World Vision Armenia կազմակերպությունում: 2015 թվականին եղել է «Բի Դի էն» ՍՊԸ-ի գլխավոր Visual Merchandiser-ը:

2018 թվականին եղել է «Բեմել» ընկերության միջոցառումների կազմակերպիչը: 2020 թվականի հոկտեմբերին կազմակերպել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի՝ «Ներդրողների խթանման եւ արտաքին կապերի» վարչության արտահանման միջոցառումները: 2021-2022 թվականներին աշխատել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի «Ներդրողների աջակցման եւ հետներդրումային սպասարկման» վարչությունում՝ որպես ծրագրերի համակարգող:

2021 թվականին հունիսի 20-ին Ազգային ժողովի արտահերթ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից առաջադրվել է պատգամավորի թեկնածու:

04.08.2022-04.08.2024 թվականներին եղել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Ավանի տարածքային կազմակերպության խորհրդի քարտուղարը:

Ազարյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Ավանի տարածքային կազմակերպության խորհրդի անդամ է:

Ջուլիետա Ազարյանը 2021 թվականին Կոտայքի մարզի Առինջ գյուղում ձեռք է բերել բնակարան բազմաբնակարան շենքում:

2023 թվականին, երբ զբաղեցրել է Ավան վարչական շրջանի ղեկավարի տեղակալի պաշտոնը, 1 մլն դրամով հողամաս է ձեռք բերել Փարաքար համայնքում:

Ազարյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել:

Նրա՝ բանկային հաշիվների մնացորդները կազմել են 282 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 300 հազար դրամ եւ 5 հազար ԱՄՆ դոլար:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 7 մլն 991 հազար դրամ, որից 6 մլն 516 հազարը աշխատանքի վարձատրություն է «Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկից, իսկ 405 հազարը այլ եկամուտ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 13 մլն 853 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է: Հենց սրա համար Ազարյանը ֆինանսների նախարարությունից ստացել է 1 մլն 69 հազար դրամ, որն էլ եկամտահարկի վերադարձի օրենքով հիփոթեքի մայր գումարի մնացորդը մարելու համար է»:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ,
ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՏԱՐԱԾՎԵԼ ԳՐԻՊԸ

Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը հիշեցնում է՝ գրիպը վարակիչ հիվանդություն է, որը զարգանում է բավականին արագ. ինկուբացիոն շրջանը կազմում է մի քանի ժամից մինչեւ երեք օր (սովորաբար՝ 1-2 օր): Ախտանշանները կտրուկ աճում են՝ թուլություն, գլխացավ, մկանացավ, հոդացավ, աչքերում կտրող ցավեր: Այնուհետեւ միանում են շնչառական ուղիների ախտահարման ախտանշանները՝ հազ, կոկորդի ցավ, քթի փակվածություն:

Վարակումը տեղի է ունենում հազի, փռշտալու կամ հիվանդի հետ սերտ շփման միջոցով: Հիվանդության բռնկումները հաճախ հանդիպում են կազմակերպված կոլեկտիվներում՝ մանկապարտեզներում, դպրոցներում, աշխատավայրում:

Գրիպի ախտանշաններ են.

- ջերմաստիճանի հանկարծակի բարձրացում՝ 37.5^{0} C-ից բարձր,
- չոր հազ կամ կոկորդի բորբոքում/ցավ, գլխացավ, մկանային եւ հոդային ցավեր, ընդհանուր թուլություն եւ անկարողություն,
- փորլուծություն, փսխում,
- կտրող ցավեր/ցավեր աչքերի մեջ:

Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՐԾԸ ԱՌԱՆՁԻՆ ԿՔՆՆՎԻ

Հունվարի 17-ին Ադրբեջանում սկսվել են Արցախի նախկին ռազմաքաղաքական առաջնորդների գործով դատական լսումները: Մեղադրյալների թվում են Լեռնային Ղարաբաղի նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Արայիկ Հարությունյանը, Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, Պաշտպանության բանակի հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանը, արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանը, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը եւ Ազգային ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանը:

Ռուբեն Վարդանյանի գործն առանձնացվել է եւ ընթանում է առանձին վարույթով: Չնայած իր գործի նյութերը մյուսների հետ միավորելու նրա խնդրանքին՝դատարանը որոշել է 422 հատորներից 400-ը առանձին դիտարկել: Ինչպես հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները, Բաքվի դատարանը 10 օր ժամանակ է տվել նրան ուսումնասիրելու նյութերը:

Բաքվում հայ գերիների դատավարության ընդհանուր գործի քննությունը հետաձգվել է մինչեւ հունվարի 21-ը, իսկ Ռուբեն Վարդանյանի գործով դատական նիստը կշարունակվի հունվարի 27-ին:

ՀԱՄԱԼՐՎԵԼ Է 110 ՎԱՐՈՐԴՈՎ

«Երեւանի ավտոբուս» ընկերությունում վարորդի 225 թափուր հաստիքից համալրվել է 110-ը, դեռ թափուր է 115 հաստիք:

Այս մասին երեկ՝ հունվարի 20-ին կայացած գործակարգավարական խորհրդակցության ժամանակ հայտարարեց «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրեն Բեգլար Կիրակոսյանը:

«Եթե նախորդ շաբաթվա ինտենսիվությամբ առաջ գնանք, այս շաբաթ թափուր հաստիքները կավարտվեն»,-հավելեց Բեգլար Կիրակոսյանը:

● Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 24 պատահար. 1 մարդ զոհվել է, 24-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՄԵԶԱՆԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ԲԱՐԵՐԱՐ

2024թ. օգոստոսի 26-ից գործարկվել է Barerar.am կայքը եւ հավելվածը, որը հնարավորություն է տալիս առանց որեւէ միջնորդի կամ միջնորդության, ուղիղ օգնություն ցուցաբերել կարիքավոր ընտանիքներին:

Հարթակում յուրաքանչյուր շաբաթ տեղադրվում է մեկ ընտանիքի մասին պատմող տեսանյութ, որտեղ ներկայացվում են ընտանիքի խնդիրներն ու կարիքները: Բացի այդ, Barerar.am կայքում եւ հավելվածում ներկայացվում են յուրաքանչյուր ընտանիքի անունով բանկային եւ IDram եւ TelCell վճարային համակարգերում նախապես բացված հաշվեհամարներ, ինչը թույլ է տալիս օգնել ցանկացող քաղաքացիներին կատարել գումարի փոխանցում հենց տվյալ ընտանիքին՝ բացառելով որեւէ տեսակի միջնորդություն:

Բացի այդ, քանի որ Barerar.am կայքում եւ հավելվածում ներկայացված են նաեւ ընտանիքների հասցեներն ու հեռախոսահամարները, յուրաքանչյուր ոք կարող է զանգի եւ տեսազանգի միջոցով կապ հաստատել որեւէ ընտանիքի հետ կամ ուղիղ այցելել՝ իր նախընտրած այլ տարբերակով օգնություն ցուցաբերելու համար:

Այս հարթակի միջոցով մեզանից յուրաքանչյուրը կարող է արագ, հեշտ եւ հարմար տարբերակով դառնալ բարերար, եւ կարեւոր չէ գրպանի մեծությունը, կարեւորը սրտի մեծությունն է:

Bitcoin–Ի ԱՐԺԵՔԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է 109,000 ԴՈԼԱՐԸ

Երկուշաբթի Bitcoin կրիպտոարժույթի արժեքը հասել է պատմական նոր առավելագույնին՝ գերազանցելով 109,000 դոլարը: Աշխարհի խոշորագույն կրիպտոբորսայի՝ Binance-ի տվյալներով՝ 24 ժամում կրիպտոարժույթի արժեքն ավելացել է 3.84%-ով: Սակայն ավելի ուշ Bitcoin-ի արժեքը նվազել է՝ իջնելով 107,646 դոլարի:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ». ՆՈՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«Յունիբանկի» «Զորավար Անդրանիկ» մասնաճյուղը սկսել է հաճախորդների սպասարկումը:

Հաշվի առնելով հաճախորդների թվի աճը եւ բանկային ծառայությունների հանդեպ մեծ պահանջարկը «Յունիբանկը» որոշում կայացրեց Մալաթիա-Սեբաստիա համայնքում բացել եւս մեկ մասնաճյուղ՝ արագ եւ որակյալ սպասարկում ապահովելու համար: Նորաբաց մասնաճյուղը մասնագիտացված է ֆիզիկական անձանց սպասարկման եւ վարկավորման ուղղությամբ:

Մասնաճյուղում առկա է նաեւ վճարային տերմինալ հաշվի համալրում, վարկի մարում կամ տարբեր ծառայությունների դիմաց վճարումներ իրականացնելու համար:

«Զորավար Անդրանիկ» մասնաճյուղի հասցեն է Երեւան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Անդրանիկի 108/11 եւ 108/9:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

ՈՎՔԵՐ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ

Եկամուտների տարեկան հայտարարագիր ներկայացնող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ քաղաքացիները եկամտային հարկի գումարից կարող են օգտվել սոցիալական ծախսի փոխհատուցման հնարավորությունից ինչպես իրենց, այնպես էլ՝ ընտանիքի անդամների (ամուսին, ծնողներ եւ զավակներ) համար կատարած սոցիալական ծախսերի մասով:

Դուք կարող եք օգտվել սոցիալական ծախսի փոխհատուցումից, եթե 2024 թվականի ընթացքում Հայաստանում գործող ապահովագրական որեւէ ընկերությունից ձեռք եք բերել առողջության ապահովագրական փաթեթ կամ Հայաստանում գործող կրթական հաստատությունում կատարել եք ուսման վճար: Ընդ որում, կրթական ծախսերը կարող են կատարված լինել ինչպես նախադպրոցական, այնպես էլ տարրական, հիմնական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին, բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի համար:

Որքան է կազմում փոխհատուցումը

Առողջապահության գծով սոցիալական ծախսի առավելագույն չափը տարեկան 50.000 դրամ է, իսկ կրթության գծով՝ տարեկան առավելագույնը՝ 100.000 դրամ: Անհրաժեշտ է հիշել, որ Ձեր եւ ընտանիքի անդամների համար կատարված բոլոր ուղղություններով սոցիալական ծախսերի առավելագույն չափը չպետք է գերազանցի տարեկան 100.000 դրամը: Այսինքն, եթե Դուք ուսման վճարի համար ստանաք 100.000 դրամ փոխհատուցում, ապա չեք կարող այլեւս օգտվել առողջության ապահովագրական փաթեթի 50.000 դրամ փոխհատուցումից: Երկու ուղղություններով փոխհատուցումից միաժամանակ կարող եք օգտվել, եթե դրանց հանրագումարը չգերազանցի 100.000 դրամը:

Ինչպես օգտվել փոխհատուցումից

Սոցիալական ծախսի փոխհատուցումից օգտվելու համար անհրաժեշտ է ծառայություն մատուցողից, այսինքն՝ ապահովագրական ընկերությունից կամ կրթական հաստատությունից պարտադիր պահանջել հաշվարկային փաստաթուղթ (ինվոյս)՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ եւ հանրային ծառայության համարանիշ: Իսկ այն դեպքում, երբ հայտարարատուն Դուք եք, բայց սոցիալական ծախսը կատարում եք Ձեր ընտանիքի անդամի համար, ապա պետք է ներկայացնեք նաեւ ընտանիքի անդամի անձը հաստատող փաստաթուղթը եւ հանրային ծառայության համարանիշը, ինչպես նաեւ ընտանիքի անդամ հանդիսանալու փաստը հիմնավորող փաստաթղթերը (ամուսնու դեպքում՝ ամուսնության վկայական, ծնողի դեպքում՝ ծնողի՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ հայտարարատուի ծննդյան վկայական, զավակի դեպքում՝ ծննդյան վկայական, որդեգրողի, որդեգրվածի դեպքում՝ որդեգրելու կամ որդեգրվելու համապատասխան հիմքը հաստատող փաստաթուղթ):

Եվ հիշեք, եթե 2025 թվականին Դուք պետք է ներկայացնեք հայտարարագիր 2024 թվականի հաշվետու տարվա համար, եւ 2024 թվականի ընթացքում ձեռք եք բերել առողջության ապահովագրական փաթեթ կամ վճարել եք ուսման համար, սակայն չունեք հաշվարկային փաստաթուղթ, ապա սոցիալական ծախսը հիմնավորելու եւ փոխհատուցումը ստանալու համար՝ կարող եք տվյալ ապահովագրական ընկերությունից կամ կրթական հաստատությունից պահանջել հաշվարկային փաստաթուղթ:

Այնուհետեւ, եկամուտների տարեկան հայտարարագիրը ներկայացնելուց հետո, նույն համակարգի միջոցով, պետք է ներկայացնեք դիմում՝ փոխհատուցման գումարը միասնական հաշվից ստանալու համար:

Կարեւոր է իմանալ սոցիալական ծախսի փոխհատուցումից օգտվելու մի քանի առանձնահատկությունների մասին.

1. եթե հայտարարագիր ներկայացնող քաղաքացին սոցիալական փաթեթի շահառու է, ապա անձամբ չի կարող օգտվել առողջապահության գծով սոցիալական ծախսի փոխհատուցումից, փոխարենը կարող է օգտվել միայն ընտանիքի անդամների համար ապահովագրական փաթեթի ձեռք բերելու դեպքում:

2. Եթե հայտարարագիր ներկայացնող քաղաքացին օգտվում է հիփոթեքային վարկի կամ ուսման վարձի կամ շահաբաժնի մասով եկամտային հարկի վերադարձի հնարավորությունից, ապա սոցիալական ծախսի փոխհատուցում կկատարվի այն դեպքում, երբ հաշվետու տարվա համար հաշվարկված եւ (կամ) վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի կողմից) եկամտային հարկի գումարների եւ Հարկային օրենսգրքով սահմանված դեպքերում ֆիզիկական անձին վերադարձված եկամտային հարկի գումարների միջեւ առկա է դրական տարբերության:

ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2025թ.-ի փետրվարի 4-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 1 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 44.8 գր. ընդհանուր քաշով, որից 17,8 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 16.3 գր.) 500 հարգի՝ 273.500 ՀՀ դրամ, 27 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 23 գր.) 585 հարգի՝ 457.800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 731.300 ՀՀ դրամ: Թիվ 2 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 19.3 գր. ընդհանուր քաշով, որից 15,9 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 15 գր.) 585 հարգի՝ 298.500 ՀՀ դրամ, 3.4 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 500 հարգի՝ 57.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 355.500 ՀՀ դրամ: Թիվ 3 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 15.4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 13 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 258.700 ՀՀ դրամ: Թիվ 4 լոտ՝ ոսկյա զարդ 20.8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 20.5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 408,000 ՀՀ դրամ: Թիվ 5 լոտ՝ ոսկյա զարդ 10.4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 10 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 199.000 ՀՀ դրամ: Թիվ 6 լոտ՝ ոսկյա ջարդոն 7.9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 139.300 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00, ք. Երեւան՝ Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ.՝ +374 43 00 42 27:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԳԱԹ-ՈՒՄ

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԱՐՊԵՏԸ՝ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՆՎԵՐԸ

Գրականության եւ արվեստի թանգարանում «Պատում մեկ իրի» ժամանակավոր ցուցադրությունների շրջանակում ներկայացվել է նկարիչ, հողարվեստի ուղղության հիմնադիր, հավաքորդ Մարկոս Գրիգորյանին պատկանող կարպետը, որը վերջինիս նվիրել է անվանի ռեժիսոր Սերգեյ Փարաջանովը:

1988-ի աշնանը բացառիկ հրավերով Սերգեյ Փարաջանովը մեկնում է Նյու Յորք՝ մասնակցելու 26-րդ միջազգային կինոփառատոնին՝ «Աշուղ Ղարիբ» ֆիլմով:

Փառատոնի ընթացքում Փարաջանովը ծանոթանում եւ բարեկամանում է Մարկոս Գրիգորյանի հետ: Նյու Յորքից վերադառնալուց հետո՝ Փարաջանովը Մարկոս Գրիգորյանին, ի նշան բարեկամության, մեղվակարպետ է նվեր ուղարկում՝ հայտնելով, որ այդ գործողությունը իշխանություններից գաղտնի է: Ի պատասխան՝ Մարկոս Գրիգորյանը կարպետը ուսերին գցած լուսանկարվում է եւ լուսանկարն ուղարկում Փարաջանովին՝ ակնարկելով, որ «գաղտնի» բեռը տեղ է հասել:

«Տարին հագեցած է լինելու Մարկոս Գրիգորյանի հոբելյանին նվիրված միջոցառումներով: Այս ցուցադրությունը գործելու է մեկ ամիս: Այս մեկ կարպետը երկու հսկաների, երկու հայորդիների ամուր ընկերության վկայությունն է: Նյու Յորքում Մարկոս Գրիգորյանը Փարաջանովին նվիրել էր շատ թանկ կինոտեխնիկա, եւ Թիֆլիս վերադառնալուն պես՝ Փարաջանովը նրան պատասխան նվեր է ուղարկում: Այս ցուցադրությամբ բացահայտում ենք նաեւ Մարկոսի բազմաժանր գործունեության եւս մեկ ոլորտ. նա նշանավոր է եղել հատկապես Իրանում՝ կինոյի ասպարեզում»,- իր խոսքում նշեց Գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Սյուզաննա Խոջամիրյանը՝ տեղեկացնելով, որ թե՛ կարպետը եւ թե՛ լուսանկարը պահպանվում են ԳԱԹ-ում:

Ցուցադրությանը ներկայացվել են նաեւ Մարկոս Գրիգորյանի մասնակցությամբ ֆիլմերից կադրեր:

Հիշեցնենք, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը վերջերս կնքել են մշակույթի ոլորտում համագործակցության հուշագիր: Համաձայն հուշագրի՝ նախատեսվում է Հանրապետության 32 հասցեում գտնվող հուշարձանշենքում հիմնել Գրականության եւ արվեստի թանգարանի մասնաճյուղ՝ նվիրված սփյուռքահայ նկարիչ, գորգանկարիչ, հողարվեստի ուղղության հիմնադիր Մարկոս Գրիգորյանին:

Ա. Ս.

ՄԱՐՔԱԿԱՆ

«ՆՈԱՅԻ» ԵՎ ՍԱՆԹՈՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՑԵԼ Է

«Նոայի» բրազիլացի պաշտպան Պաբլո Սանթոսի եւ ակումբի միջեւ պայմանագրի ժամկետը լրացել է եւ պաշտպանը հեռացել է թիմից:

Պաբլո Սանթոսը «Նոա» էր տեղափոխվել 2024 թվականի ձմեռային տրանսֆերային պատուհանի ընթացքում:

«Նոայի» կազմում 32-ամյա պաշտպանն անցկացրել է 21 հանդիպում՝ դառնալով 4 գոլի եւ 1 գոլային փոխանցման հեղինակ:

Հիշեցնենք, որ հունվարի 16-ին «Նոան» հայտարարել էր ձախ պաշտպան Ջեյմս Սանթոսին ձեռք բերելու մասին:

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՑԱՏԿԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂ

Գեղասահորդուհի Ադելիա Պետրոսյանը Սանկտ Պետերբուրգում հաղթել է Ռուսաստանի շրջացատկի առաջնությունում:

Ադելիան 3 փուլերի արդյունքում վաստակել է 119,38 միավոր:

Այսօրվա (չխմբ.) մրցաշարում հանդես կգան սպորտային զույգերը, իսկ հունվարի 19-ին կկայանա թիմային մրցաշարը:

ԿԱՅԱՑԵԼ ԵՆ 6–ՐԴ ՏՈՒՐԻ ՊԱՐՏԻԱՆԵՐԸ

Հայաստանի շախմատի կանանց եւ տղամարդկանց առաջնություններում ավարտվել են 6-րդ տուրի պարտիաները:

Տղամարդկանց առաջնությունում հաղթանակ են տոնել Ռոբերտ Հովհաննիսյանը, Սարգիս Սարգսյանը եւ Բենիկ Ագասարովը: Միավոր կիսել են Դավթյան-Հայրապետյան, Ղարիբյան-Պետրոսյան զույգերը:

Տղամարդկանց առաջնության միանձնյա առաջատարը 4,5 միավորով Ռոբերտ Հովհաննիսյանն է: 4 միավոր ունի Արթուր Դավթյանը:

Կանանց մրցաշարում իրենց պարտիաները հաղթանակով են ավարտել Նվարդ Հայրապետյանը եւ Սուսաննա Գաբոյանը:

Խաղաղ ավարտ է ունեցել Հարությունյան-Խաչատրյան, Ավետիսյան-Գասպարյան, Առաքելյան-Խաչատրյան պարտիաները:

Այժմ կանանց մրցաշարի առաջատարները երկուսն են՝ Սուսաննա Գաբոյանը եւ Աննա Խաչատրյանը:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕՊԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆՈՒՄ ԵՆ «ԱԶԳԱՅԻՆ» ԲԱՌԸ

Հայաստանի Օպերայի եւ բալետի ազգային թատրոնի, պատկերասրահի, գրադարանի եւ այլ մշակութային կառույցների անվանումներից նախատեսվում է հանել «ազգային» բառը:

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրինագիծը ներկայացրեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Դանիել Դանիելյանը:

Փոխարենը, հայրենական մշակույթի զարգացման գործում մեծ ավանդ ունեցած կառույցների անվանումներում կլինի «համապետական» բառը:

«Նախագիծը, եթե հավանության արժանանա, ապա Հայաստանի Հանրապետությունն իր անկախության օրվանից ի վեր, առաջին անգամ կունենա այսքան բովանդակալից, դինամիկ, մշակութային կյանքը զարգացնող մշակույթի օրենք»,- նշել է Դանիելյանը:

Հայաստան» խմբակցության պատգամավոր Լիլիթ Գալստյանը նշել է, որ այդպիսով իջեցվում է վերը նշված մշակութային կառույցների նշանակությունը:

ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ, ՔՊ պատգամավոր Սիսակ Գաբրիելյանը հակադարձել է ընդդիմադիր պատգամավորին՝նշելով, որ այսօր, ըստ էության, նսեմացվում են մարզերում գործող մյուս հաստատությունները, որոնք իրենց անվան մեջ չունեն «ազգային» բառը:

Անդրադառնալով նոր դասակարգմանը՝ նա շեշտել է, որ առաջին հերթին այն ենթադրելու է համապատասխան հաստատությունների պարտավորությունները հայկական մշակույթի տարածման գործում:

ՀԱՅ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԵՆ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ

Հունվարի 13-17-ը Ղազախստանի Աստանա քաղաքում կայացել է Ժաուտիկովյան միջազգային 21-րդ օլիմպիադան, որին մասնակցել է 15 երկրի 90 թիմ (շուրջ 700 աշակերտ):

Օլիմպիադան կազմակերպվում է «Մաթեմատիկա», «Ֆիզիկա» եւ «Ինֆորմատիկա» առարկաներից:

Հայաստանից օլիմպիադային մասնակցել են ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի 14, Քվանտ վարժարանի 8, Ֆոտոն վարժարանի 7 եւ ՀԱՊՀ ավագ դպրոցի 4 աշակերտներ:

Ֆիզմաթ դպրոցի 14 աշակերտներից 11-ն արժանացել են 2 ոսկե, 6 արծաթե եւ 3 բրոնզե մեդալների.

Սարգիս Առաքելյան - մաթեմատիկա, ոսկե մեդալ

Միքայել Գալստյան - մաթեմատիկա, ոսկե մեդալ

Արսեն Մակարյան - մաթեմատիկա, արծաթե մեդալ

Ալեն Ղազարյան - մաթեմատիկա, արծաթե մեդալ

Արման Ասատրյան - մաթեմատիկա, արծաթե մեդալ

Գոռ Հասրաթյան - ֆիզիկա, արծաթե մեդալ

Մարտին Խաչատրյան - ինֆորմատիկա, արծաթե մեդալ

Միեր Քալաշյան - ինֆորմատիկա, արծաթե մեդալ

Միքայել Եղիազարյան - մաթեմատիկա, բրոնզե մեդալ

Սմբատ Պողոսյան - ֆիզիկա, բրոնզե մեդալ

Ծովակ Եգորյան - ինֆորմատիկա, բրոնզե մեդալ

Քվանտ վարժարանի 8 աշակերտներից 4-ն արժանացել են 1 արծաթե եւ 3 բրոնզե մեդալների.

Գագիկ Գեւորգյան - ինֆորմատիկա, արծաթե մեդալ

Գրիգոր Թոխյան - մաթեմատիկա, բրոնզի մեդալ

Սամվել Հարությունյան - ֆիզիկա, բրոնզի մեդալ

Ալեքս Գրիգորյան - ինֆորմատիկա, բրոնզի մեդալ

Ֆոտոն վարժարանի 7 աշակերտներից 1-ն արժանացել է բրոնզե մեդալի՝ Սեւադա Հարությունյան - մաթեմատիկա:

ՀԱՊՀ ավագ դպրոցի 4 աշակերտներից 1-ն արժանացել է բրոնզե մեդալի՝ Էմիլ Հարությունյան - ֆիզիկա:

ՀԱՊՀ ավագ դպրոցի ֆիզիկայի թիմի ղեկավար Հովսեփ Կարապետյանը մարզիչների միջեւ անցկացված մրցույթում արժանացել է ոսկե մեդալի:

Նշենք, որ հաղթողներին օդանավակայանում դիմավորել են նաեւ ԿԳՄՍ նախարարության աշխատակիցները՝խրախուսելու նրանց հաջող մասնակցությունն օլիմպիադայում:

● Հունվարի 26-ին՝ ժամը 19:00-ին, Երգի պետական թատրոնում կլինի մեծ պրեմիերա՝ «Կոմիտաս» երաժշտական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-5.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Վառոը չմուծելու համար անջատել են լույսը՝ հաշվի չառնելով, որ տանն անչափահաս երեխա կա: Ի՞նչ անել եւ ու՞մ դիմել:

Ռաիսա Վարդանյան (35 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդի էլեկտրամատակարարումը դադարեցնելու դեպքերը սահմանված են Ձեզ հետ կնքված պայմանագրով, մի շարք այլ իրավական ակտերով: Մատակարարն իրավունք ունի դադարեցնելու Ձեր տան էլեկտրամատակարարումը, եթե արդեն իսկ սպառված էլեկտրաէներգիայի դիմաց կանոններով եւ պայմանագրով սահմանված ժամկետներում եւ կարգով վճարումներ չեն կատարվել բաժանորդի կողմից, ընդ որում՝ վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել Ձեր էլեկտրամատակարարումը առնվազն 3 օր առաջ հեռուստատեսությամբ կամ սպառողին հասու այլ ձեւերով (հայտարարություն փակցնելով շքամուտքերում, փոստային բաժանմունքներում եւ այլն) զգուշացնելուց հետո: Պարտքի առկայության դեպքում մատակարարը չպետք է դադարեցնի Ձեր տան էլեկտրամատակարարումը, եթե Դուք ներկայացրել եք մատակարարի համար ընդունելի վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմել եք պարտքի մարման ժամանակացույց: Դուք կարող եք ներկայանալ տարածքային սպասարկման գրասենյակ, հայտնել չվճարման պատճառները եւ խնդրել՝ կնքելու վճարման ժամանակացույց, որով հնարավորություն կստանաք մաս առ մաս կատարելու կուտակված պարտքի վճարումները: Պետք է նկատի ունենալ, որ պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում էլեկտրամատակարարումը կրկին կարող է դադարեցվել:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այն դեպքում, երբ Ձեր կողմից պարտքը մարելու մասին վճարման անդորրագիրը մատակարարին ներկայացնելուց հետո վերջինս վերոնշյալ ժամկետներում չի վերականգնել էլեկտրամատակարարումը, ապա դա կդիտվի խախտում մատակարարի կողմից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունների ճանաչումները:

Հենրի Սաղաթելյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջեւ ամուսնությունները եւ Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջեւ ամուսնությունները, որոնք կնքվել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում: Օտարերկրյա քաղաքացիների միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունները, եթե պահպանվել է այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ամուսնությունը կնքվում է Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում: Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների հյուպատոսական հիմնարկներում կնքված ամուսնությունը Հայաստանի Հանրապետությունում վավերական են փոխադարձության պայմաններով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

Իսահակյան փողոցում ինչ-որ մեկը ծառի վրա հերթականությամբ տեղադրել էր այս՝առաջին հայացքից իրար հետ տրամաբանական որեւէ կապ չունեցող իրերը, որպեսզի տեսնի, թե ով է մոտենում եւ նկարում ծառը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -2 + 2
Կոտայքի լեռներ	-10 -15 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1
Լոռի	-4 - 8 +7 + 10
Տավուշ	0 -2 +3 + 6
Արագածոտնի լեռներ	-15 - 18 -2 + 2
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2

Արարատ	0 - 5 +2 + 4
Արմավիր	-2 - 5 +2 + 4
Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	0 + 3 + 7 + 10
ԼՂՀ	-2 - 6 + 8 + 10
Երեւան	-1 - 3 0 + 2

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.1.2025**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*